



ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հայաստանում հանքարդյունաբերական համայնքներում աղետների նկատմամբ դիմակայունության խնդիրներ

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Քրիստինե Սահակյանի («Էկոլոգիան հանուն խաղաղ գոյակցման» ՀԿ նախագահ, Կ.Գ.Թ.) կողմից Հայաստանի ամերիկյան համալսարանի Պարասխանապուր հանքարդյունաբերության կենտրոնի պատվերով՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի և ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության երկխոսություն, տեղեկատվական հարթակ և երիտասարդների ներգրավվածություն» ծրագրի շրջանակներում:

1. Ներածություն (փաստաթղթի հակիրճ նկարագրություն)

Հայաստանի հանքարդյունաբերական համայնքներում աղետների հանդեպ դիմակայունության հարցերն անմիջականորեն կապված են տեղում աղետների ռիսկերի նվազեցման և հանքարդյունաբերական ոլորտում անվտանգ արտադրական գործընթացների ապահովման (տեխնիկական անվտանգության) հետ: Աղետների հանդեպ դիմակայունության բարձրացումը կարևոր գործոն է պետության զարգացման համար, որի առանցքային խնդիրներից է աղետների կանխարգելմանը, կառավարմանը, արձագանքմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը: Հատկապես հանքարդյունաբերական համայնքներում վերջինս պահանջում է համապարփակ և համակարգված գործողությունների իրականացում Կառավարության և պետական մի շարք կառույցների, ՏԻՄ-երի, հանքարդյունաբերական օպերատորների, գիտական հաստատությունների և քաղաքացիական հասարակության կողմից:

Ներկայացվող թեմայի շուրջ իրականացված ուսումնասիրություններն ընդգրկել են ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումների ներկա վիճակը, մինչ այժմ իրականացված գործընթացները (այդ թվում՝ իրավական ակտերի նախագծերը, որոնք դեռևս չեն հաստատվել Կառավարության կողմից և հասանելի են www.e-draft.am կայքում), դրանց վերլուծությունը: Ուսումնասիրվել են տեխնիկական անվտանգության, ինչպես նաև աղետների ռիսկի բաղադրիչի կիրառմամբ Հայաստանում իրականացված ծրագրերն ու հրապարակված հաշվետվությունները: Սույն փաստաթղթում փորձ է արվել ներկայացնել հանքարդյունաբերական համայնքներում աղետների նկատմամբ դիմակայունության հետ կապված ներկայիս իրավիճակը, վեր հանել օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրներն ու հիմնական բացերը, ինչպես նաև առկա իրավիճակի բարելավման նպատակով ներկայացնել որոշ առաջարկություններ:

2. Հայաստանում հանքարդյունաբերության համայնքներում աղետների նկատմամբ դիմակայունության խնդիրների ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները

Իրականացված ուսումնասիրություններն ընդգրկել են ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում տեխնիկական անվտանգության, աղետների ռիսկի բաղադրիչի պարունակությամբ հրապարակված տարբեր հաշվետվությունները (ազգային, միջազգային), ինչպես նաև Հայաստանում իրականացված այն ծրագրերն ու դրանց արդյունքները, որոնք անմիջականորեն կապված են եղել նշված բնագավառի ձեռնարկությունների կամ հանքարդյունաբերական համայնքների հետ:

Համայնքների դիմակայունության բարձրացման տեսանկյունից հատկանշական և մեկնարկային կարելի է համարել «Տարերային և տեխնաձին աղետների կանխարգելումը, պատրաստվածությունը և արձագանքումն Արևելյան գործընկերության երկրներում» [PPRD East](#) ծրագիրը (ֆինանսավորող՝ ԵՄ), որի տարբեր փուլերում (2011-2019 թթ.) իրականացվել են մի շարք աշխատանքներ կադրերի վերապատրաստման, բնակչության պաշտպանության, իրավական դաշտի կատարելագործման (մասնավորապես ջրհեղեղների մասին ԵՄ դիրեկտիվի ներդրում), աղետների կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման ոլորտում բնակչության պաշտպանական կարողությունների զարգացման, ռիսկերի կառավարման էլեկտրոնային քարտեզների կատարելագործման ու զարգացման, աղետների վերաբերյալ իրազեկության բարձրացման ուղղությամբ, կազմակերպվել են ուսումնավարժություններ, մշակվել է ռիսկերի կառավարման տարածաշրջանային էլեկտրոնային ատլաս:

Ներկայումս ԱԻՆ-ի կողմից կատարվում է ծրագրի 3-րդ փուլը, որի ուղղություններն են հիդրոոգերնութաբանական (սողանք, սելավ, քարաթափում, ջրհեղեղ, երաշտ) աղետների կառավարումը, ռիսկի գնահատումը, կանխարգելիչ միջոցառումների պլանավորումը, փորձագետների փոխանակումը, կամավորական փրկարարական շարժման ձևավորումն ու զարգացումը, հանրային իրազեկման մեխանիզմների բարելավումը:

2018-2019 թթ.-ի ընթացքում իրականացվել է [ALTER](#) (աղետների ռիսկի նվազեցման դաշինք) ծրագիրը, որի «Դիմակայունության լավագույն փորձը քաղաքների և պատվարների հարակից տարածքների համար՝ ընդդեմ երկրաշարժով պայմանավորված ջրհեղեղների» աշխատանքային փաթեթի շրջանակում պետական և մասնավոր հատվածի գործընկերների հետ միասին իրականացվել են երկրաշարժի և պատվարի փլուզման սիմուլյացիոն փոքր մասշտաբային վարժանքներ՝ ներառելով նաև հանքերում փրկարարական աշխատանքները:

2017-2020 թթ.-ի ընթացքում իրականացվել է [«Աջակցություն պոչամբարների անվտանգության բարձրացմանը Հայաստանում և Վրաստանում»](#) տարածաշրջանային ծրագիրը (ֆինանսավորող՝ Գերմանիայի Շրջակա միջավայրի դաշնային գործակալություն), որի շրջանակներում ՀՀ մի շարք պոչամբարներում իրականացվել են ուսումնասիրություններ և գնահատումներ պոչամբարների անվտանգության գնահատման մեթոդաբանության կիրառմամբ՝ մշակված հիշատակված գործակալության հովանու ներքո: Վերջինիս կատարելագործման համար ծրագրային թիմի կողմից արվել են համապատասխան առաջարկություններ՝ այն հատկապես լքված պոչամբարների համար կիրառելի դարձնելու նպատակով: Ի թիվս այլ միջոցառումների՝ կազմակերպվել է նաև դաշտային ուսումնավարժանք՝ պոչամբարի պատվարի փլուզման խաղարկմամբ, որի հիմնական նպատակը անդրսահմանային ազդեցությամբ վթարի դեպքում տեղեկության տրամադրման շղթայի արդյունավետության ստուգումն էր:

3. Հայաստանյան օրենսդրական կարգավորումները հանքարդյունաբերական համայնքներում աղետների նկատմամբ դիմակայունության վերաբերյալ

Վերջին տարիներին իրականացվել են մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ և վերլուծություններ ոլորտի օրենսդրական բացերի վերաբերյալ, ուստի սույն աշխատանքի շրջանակում դրանց մանրամասն անդրադարձ չի կատարվել: Սակայն հանքարդյունաբերական համայնքներում դիմակայունության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է կարևորել ընդերքօգտագործման ոլորտին առնչվող մի շարք իրավական կարգավորումներ, մասնավորապես.

- 2016 թ.-ի հոկտեմբերի 16-ին ընդունված [«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»](#) օրենքը, որով ընդերքօգտագործողը մինչև ընդերքօգտագործման գործունեության մեկնարկը ընդերքօգտագործման թափոնների կառավարման, ինչպես նաև դրանց վերամշակման համար պետք է.
 - մշակի ԱԻ-ում գործելու պլան՝ նշելով այն միջոցառումները, որոնք ուղղված են լինելու վթարների կանխարգելմանը, հետևանքների նվազեցմանը, իրենց աշխատակիցների և հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության պաշտպանությանը,
 - իրականացնի արտակարգ իրավիճակներին արձագանքելու ներքին ծրագիր՝ նշելով այն միջոցները, որոնք վթարի դեպքում ձեռնարկվելու են,

- վերոհիշյալ միջոցառումների իրականացման նպատակով նշանակի անվտանգության հարցերով կառավարիչ կամ ստեղծի ստորաբաժանում, որը պատասխանատվություն կկրի վթարների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ու պարբերական վերահսկողության համար՝ համաձայն արտակարգ իրավիճակներում գործելու պլանի:

Իրականացված փոփոխություններով ամրագրվել է, որ ազդակիր համայնքների բնակչությունը պետք է մասնակցելու հնարավորություն ունենա արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ու վերանայման գործընթացներին: Օրենքի անցումային դրույթների համաձայն՝ 60 ամսվա ընթացքում ընդերքօգտագործողները պարտավոր են իրենց գործունեությունը համապատասխանեցնել օրենքի նոր պահանջներին՝ միաժամանակ սահմանված կարգով պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնելով ընդերքօգտագործման թափոնների կառավարման/վերամշակման պլանները և ֆինանսական երաշխիքները:

- 2017 թ.-ի օգոստոսի 10-ին ընդունված [«Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները սահմանելու մասին»](#) ՀՀ Կառավարության N 984-Ն որոշումը, որով սահմանվել են պոչամբարի, լցակայանի հարթակի և կոյտային տարալվացման հարթակի կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջներն ու չափանիշները: Հարկ է նշել, որ, համաձայն այս որոշման, պոչամբարներ կառուցելիս պետք է հաշվի առնել նրանում պարունակվող թափոնների հետագա օգտագործման, պոչամբարի սառեցման և տարածքի հետագա օգտագործման հնարավորությունները և նրա գոյության անվտանգությունն ազդակիր բնակավայրերի համար՝ լցումից, կոնսերվացիայից և ռեկուլտիվացիայից հետո: Բացի այդ, պոչամբարը շահագործող կազմակերպությունը պետք է մշակի պոչամբարի տեխնիկական անվտանգության վկայագիր և ներկայացնի ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննության, ինչպես նաև մշակի պոչամբարի վթարների հետևանքով արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում գործելու պլան:
- 2020 թ.-ի հուլիսի 16-ին ընդունված [«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»](#) օրենքը, որով Հայաստանը հրաժարվում է վերընթաց մեթոդով պատնեշի կառուցմամբ պոչամբարներից: Ներկայացված փոփոխությունը, սակայն, վերաբերում է միայն նոր ընդերքօգտագործման թույլտվություններին: Սա նշանակում է, որ այսուհետ պոչամբարների կառուցումը կթույլատրվի վարընթաց կամ կենտրոնական (center line) մեթոդով: Այստեղ հարկ է նշել, որ վերընթաց եղանակի բացառումը պոչամբարների անվտանգության (կառուցում, շահագործում) համար չի կարող երաշխիք լինել, քանի որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն պոչամբարների (ցանկացած տեսակի) կառուցման նորմերն ու շահագործման կանոնները: Այս հանգամանքը խնդիր է նաև պոչամբարների շինարարության և շահագործման ընթացքում պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար:
- 2018 թ.-ի մարտի 30-ին հաստատվել է «Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտներում վթարներից առաջացած արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման և վերանայման գործընթացներին բնակչության մասնակցությունն ապահովելու նպատակով ազդակիր համայնքի բնակչությանը տեղեկացնելու, ազդակիր համայնքի բնակչության կողմից առաջարկություններ ներկայացնելու և այդ առաջարկությունները քննարկելու կարգը սահմանելու մասին» [ՀՀ ԱԻ նախարարի N 302-Ն հրամանը](#), իսկ 2018 թ.-ի ապրիլի 3-ին՝ «Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտներում վթարներից առաջացած արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույցը սահմանելու մասին» [ՀՀ ԱԻ նախարարի N 316-Ա հրամանը](#):
- Տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտում օրենսդրության կատարելագործման և պետական վերահսկողությունը խստացնելու նպատակով մշակվել է նաև [«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»](#) ՀՀ օրենքում [լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»](#) ՀՀ օրենքի [նախագիծը](#): Թեև առաջարկվող փոփոխություններով հստակեցվել է «առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտ» հասկացությունը, որը, ըստ ներկայացված ձևակերպման, ենթակա է պարտադիր ապահովագրման,

այնուամենայնիվ, անհասկանալի է այն հիմնավորումը, որ նախաձեռնած փոփոխությունների ընթացքում **փորձեր էին արվում** կարգավորելու առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ապահովագրման հետ կապված հարաբերությունները: Մյուս կողմից, եթե ընդունվի [«Պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը հաստատելու մասին»](#) ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, ապա հանքարդյունաբերության ոլորտի այնպիսի վտանգավոր օբյեկտներ, ինչպիսիք են օգտակար հանածոների՝ ստորգետնյա եղանակով մշակվող հանքահորերը, հանքարանները, հանքափորվածքները, հանքահարստացման (հարստացուցիչ) ֆաբրիկաների օբյեկտները, հանքահորաշինական օբյեկտները, հորատապայթեցման տեղամասերի օբյեկտները, ներհանքային (հանքահորային) տրանսպորտի և վերհան կայանքների օբյեկտները, պոչամբարային (շլամային) տնտեսության օբյեկտները, ապարների լցակույտերի օբյեկտները, արդյունաբերական պայթուցիկ նյութերի և պայթեցման միջոցների արտադրության, տեղափոխման, պահման օբյեկտները, այդ թվում՝ ստորգետնյա օբյեկտները, ենթակա կլինեն պարտադիր ապահովագրման: Այլ հարց է, թե ինչպիսի չափորոշիչների հիման վրա է տվյալ օբյեկտը դասակարգվում որպես «առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտ»:

➤ Լուրջ մտահոգություն է առաջացնում այն, որ [«ՀՀ Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»](#) Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված որոշման նախագծի ընդունման դեպքում ուժը կորցրած կհամարվեն նաև Կառավարության հետևյալ որոշումները՝

- ՀՀ Կառավարության 2009 թ.-ի հոկտեմբերի 29-ի «Օգտակար հանածոների ջարդման, տեսակավորման և հարստացման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1277-Ն որոշումը,
- ՀՀ Կառավարության 2009 թ.-ի օգոստոսի 27-ի «Ստորերկրյա եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1083-Ն որոշումը,
- ՀՀ Կառավարության 2010 թ.-ի հունվարի 21-ի «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 51-Ն որոշումը:

Այս որոշման նախագիծը հիմնավորվում է նրանով, որ **ԵԱՏՄ անդամ պետությունները չեն կարող իրենց օրենսդրությամբ սահմանել միասնական ցանկում չընդգրկված արտադրանքին առնչվող պարտադիր պահանջներ** (ԵԱՏՀ 2011 թ.-ի հունվարի 28-ի թիվ 526 որոշում): Որոշման նախագծի ընդունման դեպքում բաց կմնա այն հարցը, թե ինչ չափանիշներով պետք է հետազայում ապահովվեն և կանոնակարգվեն վերոհիշյալ հարցերը:

Համայնքների դիմակայունության հետ կապված հարցերը Հայաստանում ավելի մեծ ուշադրության սկսել են արժանանալ հիմնականում վերջին տասնամյակում: Այդ ուղղությամբ իրականացված աշխատանքների շարքում կարելի է առանձնացնել [ՀՀ Կառավարության 2012 թ.-ի մարտի 7-ի N281-Ն որոշումը](#) «Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին»:

[ՀՀ Կառավարության 2017-2022 թթ.-ի ծրագրով](#) ամրագրվել է մի շարք գործընթացների իրականացման կարևորությունը, որոնց ուղղությամբ արդեն իսկ աշխատանքներ տարվում են: Մասնավորապես.

- Ստեղծել և գործարկել աղետների ռիսկի նվազեցման էլեկտրոնային միասնական կառավարման համակարգ:
- Բնակչության համար ներդնել աղետների վաղ ազդարարման և իրազեկման ժամանակակից համակարգ՝ թվային կապի կիրառմամբ:

- Ընդլայնել ՏԻՄ-երի լիազորությունները աղետների ռիսկի նվազեցման, աղետների արձագանքման, վաղ վերականգնման և հետադետային վերականգնման հարցերում: Վերջիններիս ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ, համայնքի ղեկավարներ), ինչպես նաև կազմակերպությունների իրավասությունները սահմանվել են [«Աղետների ռիսկերի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծում](#), որը նպատակ ունի կատարելագործելու արտակարգ իրավիճակների ոլորտը կարգավորող իրավական դաշտը:
- Համայնքի աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացման նպատակով ներդնել սահմանամերձ մարզերի քաղաքային համայնքներում ճգնաժամային կառավարման համակարգ՝ աղետների ռիսկի կառավարման գործընթացներում մասնավոր հատվածի ներգրավմամբ: Սա ամրագրված է նաև «ԱԻՆ զարգացման ռազմավարության և դրա իրականացման 2020-2030 թթ.-ի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության [որոշման նախագծում](#) (տե՛ս որոշման նախագծի հավելվածները):
- Մշակվել է նաև «Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած մարդկային անվերահսկելի հոսքերի կառավարման գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության [որոշման նախագիծ](#), որով ակնկալվում է կանոնակարգել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործողություններն ու դրանց իրականացման կարգը: Համաձայն այս որոշման՝ ԱԻՆ-ի կողմից, շահագրգիռ մարմինների ներգրավմամբ, պետք է կազմակերպվեն շտաբային (յուրաքանչյուր տարի) և համալիր (յուրաքանչյուր երեք տարին մեկ) վարժանքներ:
- 2019 թ.-ին ԱԻՆ-ի կողմից մշակվել է [«Մարզերի, համայնքների և կազմակերպությունների աղետների ռիսկի կառավարման պլանների կառուցվածքը սահմանելու և մշակելու մասին» Կառավարության որոշման նախագիծը](#), որի հիմքում ընկած են կայուն զարգացման նպատակների, աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների ծրագրի և Կառավարության մի շարք որոշումների դրույթներ առ այն, որ բնակչության պաշտպանության համակարգի բոլոր մակարդակներում (մարզպետարաններ, համայնքներ, կազմակերպություններ) անհրաժեշտ է մշակել և ներդնել աղետների ռիսկի կառավարման պլաններ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն սպառնացող վտանգների նվազեցմանը, արտակարգ իրավիճակներում արագ և արդյունավետ արձագանքմանն ու կառավարմանը:

4. Հայաստանյան ինստիտուցիոնալ շրջանակները՝ կապված հանքարդյունաբերական համայնքներում աղետների նկատմամբ դիմակայունության հետ

Համայնքներում (այդ թվում՝ հանքարդյունաբերական) դիմակայունության ապահովման տեսանկյունից հիմնական գործառույթներ են իրականացնում հետևյալ գերատեսչությունները.

➤ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, որը մշակում, իրականացնում և համակարգում է օրենքով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում ՀՀ Կառավարության քաղաքականությունը.

ՀՀ ԱԻՆ հետևյալ ստորաբաժանումները՝

- ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունը (ՓԾ), որն իրականացնում է քաղաքացիական պաշտպանությունը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը, ինչպես նաև համակարգում է արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքները,
- ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնը, որն ապահովում է արտակարգ իրավիճակների կառավարման օպերատիվությունը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվական գործընթացների կենտրոնացումը, տեղեկատվության օպերատիվ արտացոլումը, ինչպես նաև բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացումը,

- ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որն իրականացնում է արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման փորձաքննությունը (այդ թվում տալիս է եզրակացություն պոչամբարների, ստորգետնյա կամ բաց եղանակներով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության վերաբերյալ),
 - ՀՀ ԱԻՆ աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ը, որն իրականացնում է Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկերի նվազեցման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգումը, ինչպես նաև հնարավոր երկրաշարժների կանխատեսման համակարգերի կառավարման ապահովումը,
 - ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական ռեզերվների գործակալությունը, որն ապահովում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութական պաշարների պահուստի ստեղծումը, պահպանումն ու թարմացումը:
- **ՀՀ Առողջապահության նախարարությունը.**
- ապահովում է առողջության սպառնալիքների մասին բնակչության իրազեկումը, տալիս է համապատասխան եզրակացություն աղետի հետևանքների սանիտարահամաճարակային իրավիճակի վերաբերյալ,
 - իր իրավասության շրջանակներում իրականացնում է փորձաքննություն և հնարավոր առողջապահական ռիսկերի վերաբերյալ տալիս համապատասխան եզրակացություն,
 - քիմիական և կենսաբանական վթարների դեպքում իրականացնում է հսկողություն տարհանված բնակչության, ժամանակավոր կացարաններում խմելու ջրի, սանիտարակենցաղային պայմանների նկատմամբ,
 - իրականացնում է հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, կազմակերպում է օպերատիվ բժշկական խմբերի՝ ժամանակին աղետի գոտի հասնելը և ապահովում առաջնային միջոցառումները,
 - իրականացնում է տուժած բնակչության բժշկական սպասարկումը, տարհանման ժամանակ ապահովում է տարհանվող բնակչության ուղեկցումը և բուժսպասարկումը (այդ թվում՝ միջանկյալ ու տարհանման վերջնակետերում):
- **ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը.**
- իրականացնում է հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը և դրա իրականացման ապահովումը, ընդերքի թույլտվությունների հայտերի կառավարումն ու վարչարարությունը, ընդերքի թույլտվությունների հայտերի համար պահանջվող օգտակար հանածոների պաշարների հաշվարկների ուսումնասիրումն ու հաստատումը,
 - իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է վերահսկողություն բաց և ստորգետնյա եղանակով մշակվող հանքավայրերի շահագործման նկատմամբ ինչպես առօրյա պայմաններում, այնպես էլ աղետների ծագման դեպքում,
 - մասնակցում է մարզպետարանների և համայնքների կողմից աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ գործունեության իրականացմանը, համակարգում մարզպետների ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև պետական կառավարման համակարգի այլ մարմինների հետ վերջիններիս աշխատանքները,
 - կազմակերպում է տարածքային զարգացման ծրագրերի մշակումը:
- **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը.**

- իրականացնում է էկոլոգիական անվտանգության կարգավորումն ու վերահսկումը, շրջակա միջավայրի պահպանության և մշտադիտարկման ապահովումը, ինչպես նաև էկոլոգիայի հետ կապված գործառնությունները,
- ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ը կատարում է հանքարդյունաբերական և քաղաքաշինական ոլորտի նախագծերի ՇՄԱԳ փորձաքննությունը,
- ՇՄՆ «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ն իրականացնում է հիդրոոդերևութաբանական գործունեության բնագավառի պետական քաղաքականության ու ռազմավարության մշակումը և իրագործումը, հիդրոոդերևութաբանական երևույթների ռեժիմային և հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների աշխատանքները:

➤ **ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը.**

- մշակում և իրականացնում է արդյունաբերական ներուժի ընդլայնման և մրցունակության բարձրացման, արդյունաբերության տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականությունը՝ ապահովում է տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառումը,
- մշակում է պետություն-մասնավոր հատված համագործակցության քաղաքականությունը և գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրեր,
- իրականացնում է տարբեր ոլորտների զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման ենթածրագրերի ընդգրկման համակարգումն ու հսկողությունը:

➤ **ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը.**

- համակարգում է միջազգային գործընկերների հետ համագործակցությունը, միջազգային մարդասիրական ծրագրերի իրականացումն ու փոխօգնության տրամադրման գործընթացները,
- ապահովում է միջազգային համագործակցությունը՝ միջպետական համաձայնագրերի և պայմանագրերի մշակում և կնքում, հումանիտար օգնության կազմակերպում, միջազգային փրկարարական ուժերի և կառույցների մասնակցություն արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին:

➤ **ՀՀ Քաղաքաշինության կոմիտեն.**

- իրականացնում է սեյսմակայուն շինարարության բնագավառի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացի, տարածքների հետազոտության և ճարտարագիտական պաշտպանության աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- իրականացնում է ՀՀ հողային պաշարների պետական կառավարումը,
- կազմակերպում և իրականացնում է բարձր ու բարձրագույն ռիսկայնության աստիճան (կատեգորիա) ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննությունը,
- մշակում է վտանգավոր երկրաբանական երևույթներից քաղաքաշինական օբյեկտների պաշտպանության ծրագրեր և ապահովում դրանց մշտադիտարկման իրականացումը,
- մշակում է քաղաքացիական պաշտպանության բնագավառում պլաններն ու ծրագրերը, իրականացնում հիմնական միջոցառումները:

➤ **ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն** իրականացնում է աղետների կառավարման քաղաքացիական պաշտպանության հարցերով ուսուցման կազմակերպումը հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում:

➤ ՀՀ Արդարադատության նախարարությունն իրականացնում է իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ գործունեություն:

➤ ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինն իրականացնում է քաղաքաշինության, հրդեհային և տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ վերահսկողությունը, այդ ոլորտներում ռիսկերի կառավարումը, կիրառում է պատասխանատվության միջոցներ օրենքով սահմանված պահանջների խախտման համար:

➤ ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն ապահովում է բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը, ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը, կիրառում է պատասխանատվության միջոցներ օրենքով սահմանված պահանջների խախտման համար:

5. Քննարկվող խնդրի ուղղությամբ միջազգային լավագույն փորձի և ստանդարտների օրինակներ

Միջազգային լավագույն փորձ: Հանքարդյունաբերական համայնքներում դիմակայունության բարձրացման հարցերը մի կողմից կախված են ընդերքօգտագործողի կողմից ժամանակակից տեխնոլոգիական լուծումների կիրառումից (օր.՝ չոր պոչերի տեխնոլոգիա, շրջանառու ջրի համակարգ, պոչամբարների ջրամերժ թաղանթապատում, գազահեռացում, կենսաբանական ռեկուլտիվացիա՝ հատուկ բուսատեսակների կիրառմամբ և այլն), մյուս կողմից՝ ընդերքօգտագործման բոլոր փուլերում՝ նախագծում, շինարարություն, շահագործում, մոնիտորինգ, վերահսկողություն, շահագործումից դուրսբերում, փակում, ռեկուլտիվացիա և այլն, միջազգային լավագույն գործիքակազմերի ներդրումից ու հետևողական գործելակերպի որդեգրումից:

Միջազգային լավագույն փորձի տեսանկյունից հատկանշական է Եվրամիության [«Արդյունահանող ոլորտի թափոնների կառավարման համար առկա լավագույն առաջավոր տեխնոլոգիաների \(ԱԱՏ\) վերաբերյալ տեղեկատու փաստաթուղթը»](#) (Best Available Techniques (BAT) Reference Document for the Management of Waste from Extractive Industries), ինչպես նաև [Պոչամբարների կառավարման համաշխարհային արդյունաբերական նոր ստանդարտը՝](#) (2020 թ.), որի հիմքում են ընկած են նաև այն ուղեցույցներն ու ձեռնարկները, որոնք մշակվել են [ՄԱԿ ԵՏՀ ջրի և արդյունաբերական վթարների համատեղ փորձագիտական խմբի](#) կողմից, մասնավորապես.

- ՄԱԿ ԵՏՀ անվտանգության ուղեցույցներն ու առաջատար փորձը պոչամբարային տնտեսությունների համար ([UNECE Safety guidelines and good practices for Tailings Management Facilities](#)),
- Գործողությունների պլանավորման ՄԱԿ ԵՏՀ ստուգաթերթ անդրսահմանային ջրերի վրա ազդեցություն ունեցող պատահարների համար ([UNECE Checklist for contingency planning for accidents affecting transboundary waters](#)),
- Արդյունաբերական օբյեկտների վտանգի գնահատման մեթոդաբանությունների ակնարկ ([An overview of methodologies for hazard rating of industrial sites](#)),
- ՄԱԿ ԵՏՀ անվտանգության ուղեցույցներն ու առաջատար փորձը խողովակաշարերի համար ([UNECE Safety guidelines and good practices for Pipelines](#)),
- ՄԱԿ ԵՏՀ ուղեցույց «Հողօգտագործման պլանավորման, վտանգավոր գործունեություն իրականացնող օբյեկտների տեղակայման և դրանց առնչվող անվտանգության ասպեկտների վերաբերյալ» ([UNECE Guidance on Land-Use Planning, the Siting of Hazardous Activities and related Safety Aspects](#)),

- ՄԱԿ ԵՏՀ անվտանգության ուղեցույցներն ու առաջատար փորձը հրդեհամարման համար նախատեսված ջրի կառավարման և պահման համար ([UNECE Safety guidelines and good practices for the management and retention of firefighting water](#)):

Անդրսահմանային ազդեցությամբ արդյունաբերական վթարների դեպքում կարևորվում է [Էլքա](#), [Հոննոս](#) և [Դանուբ](#) գետերի պաշտպանության միջազգային հանձնաժողովների գործունեությունը՝ կապված գետավազանային մակարդակով ազդարարման միասնական համակարգի ձևավորման հետ:

Ստանդարտներ: Հայաստանը 2017 թ.-ից անդամակցում է [Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը](#), որը համաշխարհային ստանդարտ է, և դրա պահանջների իրականացման նպատակը նավթի, գազի, հանքարդյունաբերության ոլորտներում թափանցիկության և հաշվետվողականության բարելավումն է:

Բուն համայնքների դիմակայունությանն առնչվող ստանդարտներից է, օրինակ, [Ավստրալիայի Քվինսլենդ նահանգի](#) աղետների ռիսկի կառավարման ստանդարտը՝ հիմնված ազգային օրենսդրության վրա:

Հայաստանում որևէ ստանդարտ չի կիրառվում, թեև այս ուղղությամբ գործում են միջազգային և համաշխարհային ստանդարտներ, մասնավորապես.

- [ISO 37120:2018 միջազգային ստանդարտ](#). Դիմակայուն քաղաքներ և համայնքներ-Քաղաքային ծառայությունների և կյանքի որակի ինդիկատորներ (ISO 37122:2018 Խելացի քաղաքների ինդիկատոր, ISO 37123:2018 Դիմակայուն քաղաքների ինդիկատոր),
- [ISO 22328-1:2020](#) Անվտանգություն և դիմակայունություն-Արտակարգ իրավիճակների կառավարում-Մաս 1. Ընդհանուր ուղեցույցներ համայնքային մակարդակում տարերային աղետների վաղ նախազգուշացման համակարգի ներդրման վերաբերյալ,
- [HSO 9002:2020](#) Արտակարգ իրավիճակների և աղետների կառավարում (համաշխարհային ստանդարտ), որի առանցքային ուղղություններն են արտակարգ իրավիճակների և աղետների կառավարման հիմքերի ստեղծումը, դրանց ռիսկերի գնահատումն ու նվազեցումը, արտակարգ իրավիճակների և աղետների դեպքում արձագանքման և հետադետային վերականգնման պատրաստվածությունը և դրանց իրականացումը:

6. Քննարկվող թեմայի ուղղությամբ վեր հանված հիմնական օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրները և բացերը

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ համայնքներում (հատկապես հանքարդյունաբերական համայնքներում) դիմակայունության բարձրացման համար առկա են մի շարք մարտահրավերներ, որոնք, ի թիվս օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտում առկա բացերի, կապված են նաև հանքարդյունաբերական օպերատորների առօրյա գործունեության տարրական կանոնների պահպանման և դրանց վերահսկման հետ:

Պեղություն-ընդերքօգտագործող-համայնք շրջայում վեր հանված խնդիրներն ու բացերը պայմանականորեն բաժանվել են 2 խմբի՝

- **դիմակայունության հետ կապված ընդհանուր խնդիրներ**, որոնք վերաբերում են ՀՀ բոլոր համայնքներին՝ ներառյալ հանքարդյունաբերական օբյեկտներ, վտանգավոր արտադրական օբյեկտներ, ջրամբարներ ունեցող կամ դրանց ազդեցության գոտում գտնվող համայնքներ: Այդ խնդիրներն են.
 - աղետների դեպքում պետական կառավարման մարմինների բոլոր մակարդակներում արտակարգ իրավիճակների ռեժիմ հայտարարելու իրավական հիմքերի (լիազորություն, պարտավորություն, չափանիշ, չափորոշիչ) բացակայությունը,
 - աղետների կանխարգելման, կառավարման, արձագանքման և հետևանքների վերացման ուղղությամբ ա) իրավական դաշտի անկատարությունը, բ) կոնկրետ դերակատարների գործառույթների անհստակությունը, գ)

պետական կառավարման մարմինների (հանրապետական, տարածքային և ՏԻՄ-եր) և կազմակերպությունների միջև հստակ տարանջատված լիազորությունների և պարտականությունների բացակայությունը, դ) պետական կառավարման բոլոր մակարդակներում անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների, տեխնիկական միջոցների և որակյալ կադրերի պակասը, ե) պետական գերատեսչությունների միջև արդյունավետ փոխհամագործակցության պակասը,

- սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում/քաղաքականություններում աղետների նկատմամբ դիմակայունության բաղադրիչի անտեսումը,
- համայնքների դիմակայունության բարձրացմանն ուղղված ինտեգրված կրթական համակարգի բացակայությունը,
- աղետների դիմակայունության հարցերում համայնքների պատրաստվածության ցածր մակարդակը և աղետակալուն հասարակություն ձևավորելու գործում բնակչության իրազեկության և կրթվածության ցածր մակարդակը:
- **դիմակայունության հետ կապված կոնկրետ խնդիրներ**, որոնք անմիջականորեն վերաբերում են հանքարդյունաբերական համայնքներին և դրանց ազդեցության գոտու բնակավայրերին: Դրանք են.
 - հանքարդյունաբերական գործընթացների նկատմամբ ոչ պատշաճ պետական վերահսկողությունը (տեսչական մարմինների անբավարար աշխատանք, կարողությունների և որակյալ մասնագետների պակաս),
 - ընդերքօգտագործման նախագծային փաստաթղթերի հաստատման գործընթացում (քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն) ԱԻ նախարարության սահմանափակ լիազորությունները (Եթե հաշվի առնենք, որ հանքարդյունաբերական համայնքների զգալի մասն ապահովված չէ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, ապա տարերային կառուցապատումը, տարածքների ոչ ճիշտ ընտրությունը և այլ անցանկալի երևույթներ լուրջ վտանգ են համայնքային անվտանգության ապահովման համար:),
 - պոչամբարների դասակարգման բացակայությանը՝ ըստ դրանցում կուտակված թափոնների վտանգավորության աստիճանի,
 - հիդրոտեխնիկական կառույցների, մասնավորապես պոչամբարների դիսկերի/անվտանգության գնահատման բացակայությունը (մեթոդաբանությունների բացակայություն),
 - հանքարդյունաբերական օպերատորների կողմից աղետների կանխման և տեխնոլոգիական շղթայում առկա խնդիրների բացահայտման ուղղությամբ ոչ բավարար կարողություններն ու տեխնիկական միջոցները,
 - հանքարդյունաբերական օպերատորների կողմից արտադրական գործընթացում բացահայտված խնդիրների անտեսումը կամ դրանց լուծմանն ուղղված տեխնիկական և/կամ կազմակերպչական բնույթի միջոցառումների՝ ժամանակին չիրականացումը,
 - հանքարդյունաբերական օպերատորների կողմից հնացած տեխնոլոգիաների և ցածր տեխնիկական արդյունավետությամբ սարքավորումների կիրառումը (ոլորտի օրենսդրությունն ընդերքօգտագործողից պահանջում է կիրառել առկա լավագույն տեխնոլոգիաները, սակայն պահանջը դեկլարատիվ է, քանի որ բացակայում են դա երաշխավորող մեխանիզմները, և սահմանված չէ տեխնոլոգիական պայմանների այն մակարդակը, որի չապահովումը ընդերքօգտագործման իրավունքի մերժման հիմք կարող է հանդիսանալ),
 - օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի և դրա հարակից համայնքների բնակչության անվտանգության հարցերի/միջոցառումների հետագա իրականացումը պետության կողմից ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման դեպքում, որը ծանրանում է պետության ուսերին (պետք է իրականացվի պետական միջոցների հաշվին կամ դրամաշնորհային ծրագրերի միջոցով):

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս Հայաստանում կանոնակարգված չեն արտակարգ իրավիճակին վերաբերող մի շարք պարտադիր ինստիտուցիոնալ գործընթացներ, որոնք վերաբերում են հետևյալ հարցերին.

- որո՞նք են այն դեպքերը, հետևանքների ծանրության աստիճանը, կամ ինչպիսի՞ հանգամանքների դեպքում կարող է հայտարարվել արտակարգ իրավիճակ, և մտցվել արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմ համայնքային, մարզային կամ հանրապետության մակարդակով,
- հստակ չէ արտակարգ իրավիճակ հայտարարելու լիազորություններ ունեցող պետական մարմինների շրջանակը, և թե ինչ ժամկետներում և ինչ եղանակով պետք է հայտարարվի արտակարգ իրավիճակ,
- կանոնակարգված չեն արտակարգ իրավիճակ հայտարարելու և իրավական ռեժիմ հաստատելու պատասխանատու մարմինների, կազմակերպությունների, բնակչության իրավահարաբերությունները, կիրառվող սահմանափակումներն ու միջոցները:

Այս հարցերը [«Աղետների ռիսկերի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի](#) ընդունման դեպքում որոշակիորեն հստակեցվում են, և կարելի է ասել, որ օրենքի նախագծի ընդունումը կլինի մեկ քայլ առաջ համայնքների դիմակայունության բարձրացման ուղղությամբ: Սակայն մտավախությունն այն է, որ օրենքի նախագծով [կազմակերպություններն իրենք են մշակելու իրենց՝ աղետների ռիսկի կառավարման պլանը և լիազոր մարմնի հետ համաձայնեցումից հետո ապահովելու դրա կիրարկումն ու վերահսկումը](#): Նման պլանները հատկապես հանքարդյունաբերական համայնքներում պետք է մշակվեն աղետների ռիսկի ոլորտի համապատասխան մասնագետների և ՏԻՄ-երի իրական ներգրավմամբ, ոչ թե զուտ օրինակելի պլանի ձևի տրամադրման հիման վրա: Խնդրահարույց է նաև այն, որ աղետների ռիսկի կառավարման պլանի իրականացման վերահսկողությունը վերապահվում է տվյալ կազմակերպությանը:

Օրենքի այս նախագծում նշվում է նաև, որ [կազմակերպությունը, ելնելով իր գործունեության առանձնահատկություններից, ռիսկային գոտում գտնվող ազդակիր համայնքների համար ստեղծում է ազդարարման համակարգ և ապահովում դրա անխափան աշխատանքը](#): Սակայն կազմակերպության համար չկա հստակ պահանջ՝ ունենալու ներքին և արտաքին ազդարարման պլաններ, հատկապես որ արտաքին ազդարարման պլանի մշակման ժամանակ խիստ կարևոր են ՏԻՄ-երի իրական մասնակցությունը և նրանց կողմից տվյալ պլանի հաստատումը: Այս դեպքում հստակեցման կարիք ունի նաև այն, թե ով է վերահսկելու ազդարարման համակարգի ֆունկցիոնալության ստուգումը, ինչ ձևաչափով և ինչ պարբերականությամբ:

7. Առկա իրավիճակի բարելավման նպատակով քաղաքականության մշակման նախնական առաջարկներ

➤ Կարճաժամկետ

1. Ընդերքօգտագործման ոլորտի ծրագրերում (նախագծում, շինարարություն, հանքերի շահագործում կամ փակում, ռեկուլտիվացիա և այլն) գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների, ոլորտի մասնագետներ պատրաստող ուսումնական հաստատությունների հետ սերտ համագործակցություն, նրանց մասնագիտական կարծիքը ստանալն ու հաշվի առնելը:
2. Ընդերքօգտագործման ոլորտին առնչվող ծրագրերի քննման, հաստատման գործընթացներում (փորձաքննական գործընթացներ և այլն) պետական համակարգում ոչ մասնագետների և/կամ համապատասխան որակավորում չունեցող մասնագետների ներգրավման բացառում (ոլորտում ներգրավված մասնագետների համար, կախված մասնագիտական ուղղվածությունից, հստակ մասնագիտական չափորոշիչների կամ գիտելիքների նվազագույն մակարդակի սահմանում, որը չապահովելու դեպքում անձը չի կարող ներգրավված լինել հանքարդյունաբերական ոլորտին առնչվող որևէ գործունեության մեջ):
3. Ոլորտի մասնագետների (այդ թվում՝ հանքարդյունաբերական օպերատորի անձնակազմի) որակավորման շարունակական բարձրացում և դրա իրականացման նկատմամբ պատշաճ վերահսկողություն:

4. Ընդերքօգտագործման ոլորտի ձեռնարկությունների պատրաստվածության մակարդակի բարձրացում՝ պլանային վարժանքների իրականացմամբ (ցանկալի է տարեկան 2 անգամ), և դրա իրականացման նկատմամբ պատշաճ վերահսկողություն:
5. Հանքարդյունաբերական համայնքներում հասարակության համար բաց դաշտային ուսումնավարժանքների անցկացում (տարեկան պարբերականությամբ)՝ տեղական ինքնակառավարման մարմինների և համապատասխան պետական գերատեսչությունների ներգրավմամբ, ինչը կնպաստի նաև աղետների հանդեպ դիմակայունության հարցերում համայնքների իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի աստիճանական բարձրացմանը:

➤ **Միջնաժամկետ**

1. Ընդերքօգտագործման ոլորտի օրենսդրական դաշտի վերանայում, այդ թվում՝ ոլորտին առնչվող գործառույթներ ունեցող պետական կառավարման և ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակների, գործառույթների, դրանց իրականացման համար սահմանված ընթացակարգերի վերլուծություն, վերանայում և ամբողջականացում:
2. Պոչամբարների կառուցմանը ներկայացվող նորմերի և շահագործման կանոնների մշակում (սա հիմք կհանդիսանա 3-րդ կետի իրականացման համար, ինչն իր հերթին թույլ կտա բարձրացնել տեսչական ստուգումների արդյունավետությունը):
3. Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների, այդ թվում՝ պոչամբարների (գործող, ժամանակավոր դադարեցված, կոնսերվացված) անվտանգության գնահատման մեթոդաբանությունների մշակում (սա հիմք կհանդիսանա 4-րդ կետի իրականացման համար՝ կրելով պարբերական բնույթ):
4. Գործող, ժամանակավոր դադարեցված և կոնսերվացված պոչամբարների անվտանգության համալիր գնահատման (տեխնիկական անվտանգության ուսումնասիրություններ, բնապահպանական ուսումնասիրություններ, պատվարների կայունության գնահատում՝ հաշվի առնելով նաև բնական աղետների ռիսկը) իրականացում:
5. Առկա լավագույն տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ երաշխավորող մեխանիզմների ստեղծում՝ տեխնոլոգիական պայմանների/չափորոշիչների այն նվազագույն մակարդակի սահմանմամբ և դրանց տեխնիկատնտեսական հիմնավորումների հաշվառմամբ (օր.՝ օգտակար հանածոների՝ ստորգետնյա եղանակով մշակում, չոր պոչերի մեթոդ, պոչամբարի թաղանթապատում, ջրի շրջանառու համակարգ և այլն), որի չափահավումը հիմք կհանդիսանա ընդերքօգտագործման իրավունքի մերժման/դադարեցման համար:
6. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում (համայնքային, մարզային, հանրապետական) աղետների նկատմամբ դիմակայունության բաղադրիչի ընդգրկում:

➤ **Երկարաժամկետ**

1. Միայն հանքարդյունաբերական հարցերով զբաղվող առանձին պետական կառույցի ստեղծում, որին կվերապահվեն հանքարդյունաբերական ոլորտում իրականացվող առանցքային գործառույթները (ռիսկերի բացահայտում, թույլտվությունների տրամադրում, փորձաքննական գործընթացներ, աջակցություն հանքարդյունաբերական օպերատորին և ՏԻՄ-երին՝ արտակարգ իրավիճակներում գործելու իրատեսական պլանների մշակման գործընթացում և այլն), ինչը թույլ կտա ոլորտի աշխատանքները դարձնել ավելի համակարգված:
2. Դիմակայուն հանքարդյունաբերական համայնքներ ձևավորելու նպատակով համայնքների/մարզերի նյութատեխնիկական զինվածության շարունակական բարելավում (օր.՝ համապատասխան սարքավորումներով զինված շարժական լաբորատորիաներ՝ ջրի, օդի, հողի աղտոտվածության մակարդակն արագ գնահատելու նպատակով, ամենագնացներ, շտապ օգնության ժամանակակից մեքենաներ, հրշեջ մեքենաներ, աղետների և հետադետային հետևանքների վերացման համար կիրառվող տեխնիկական այլ միջոցներ և սարքավորումներ):

3. Ընդերքոգտագործման ոլորտի ձեռնարկությունների՝ արտակարգ իրավիճակներում գործելու պլանների վերանայում՝ պոտենցիալ ազդակիր համայնքների ներգրավմամբ և այդ պլանները իրատեսական դարձնելու ուղղությամբ:
4. Համայնքների դիմակայունության բարձրացմանն ուղղված ինտեգրված կրթական համակարգի ներդրում կրթության տարբեր մակարդակներում՝ մանկապարտեզներ, դպրոցներ, բուհեր: